ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«------» օգոստոսի 2012թ. N-------Ա

ՈՐՈՇՈՒՄ

ՀԽՍՀ ՎԱՍՏԱԿԱՎՈՐ ԱՐՏԻՍՏ ՄԱՐԱՏ ՀԱԼԱՋՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի օգոստոսի 31-ի «Հայաստանի Հանրապետությունում պետական և հասարակական նշանավոր գործիչներին նվիրված հուշարձանների իրականացման կարգը հաստատելու մասին» N 551 որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետը՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Տալ համաձայնություն ՀԽՍՀ վաստակավոր արտիստ, Հայաստանի ռադիոյի և հեռուստատեսության պետական կոմիտեի հաղորդավար, ԽՍՀՄ Ժուռնալիստների միության և Հայաստանի թատերական ընկերության անդամ Մարատ Հալաջյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Եզնիկ Կողբացի-42 հասցեում տեղադրելու համար։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ – ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՀԽՍՀ ՎԱՍՏԱԿԱՎՈՐ ԱՐՏԻՍՏ ՄԱՐԱՏ ՀԱԼԱՋՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Որոշման համար հիմք է հանդիսանում Մարատ Հալաջյանի երկարատև և ազգանպաստ գործունեությունը Հայաստանի ռադիոյի և հեռուստատեսության ասպարեզում, ինչպես նաև նրա ճանաչելիությունը հասարակության լայն զանգվածներին:

Մարատ Հալաջյանը ծնվել է 1920 թվականի դեկտեմբերի 30-ին Երևանում, Արևմտյան Հայաստանի Խարբերդ քաղաքից գաղթած Հալաջյանների ընտանիքում:

Սովորել և ավարտել է Խ.Աբովյանի անվան դպրոցը:

1940 թվականին ավարտել է Երևանի թատերական ստուդիա-ինստիտուտը, որից հետո որպես դերասան աշխատել է Արտաշատի դրամատիկական թատրոնում:

1945 թվականին ընդունվում է Հայաստանի հեռուստատեսության և ռադիոյի պետական կոմիտե, որպես հաղորդավար:

Նրա ձայնն այսօր էլ է հնչում Հանրային ռադիոյով, ֆոնդային ձայնագրություններում, ինչպես նաև Երևան ստուդիայի նկարահանած «Սայաթ-Նովա», «Շիրակի մեղեդիները», «Պոեմ Հերոսական» և այլ ֆիլմերում:

Հայկական ՍՍՀ Գերագույն խորհրդի 1967թվականի մայիսի 5-ի հատուկ հրամանագրով արժանացել է հանրապետության վաստակավոր արտիստի կոչման:

1969 թվականից ՍՍՀՄ ժուռնալիստների միության անդամ էր:

Մահացել է 1971 թվականին:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՀԽՍՀ ՎԱՍՏԱԿԱՎՈՐ ԱՐՏԻՍՏ ՄԱՐԱՏ ՀԱԼԱՋՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ/ԿԱՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«ՀԽՍՀ վաստակավոր արտիստ Մարատ Հալաջյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակի տեղադրման մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեում լրացումներ և/կամ փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՀԽՍՀ ՎԱՍՏԱԿԱՎՈՐ ԱՐՏԻՍՏ ՄԱՐԱՏ ՀԱԼԱՋՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ/ԿԱՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«ՀԽՍՀ վաստակավոր արտիստ Մարատ Հալաջյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակի տեղադրման մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ այլ իրավական ակտերում լրացումներ և/կամ փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ